ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒՄ

«Ձեռագրերի աշխարհում»[1] գրքում Ա. Արշարունին պատումների ձևով ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում «ձեռագրերի անծայրածիր աշխարհ» հետ առնչվող հետաքրքրական փաստեր և դեպքեր, ինչպես նաև ուշադրավ գրվածներ իր որոնումներից ու հանդիպումներից։

Ժողովածուի պատումներից մեկը, որ կրում է «Բժիշկ պարոն Քալանթարյան» վերնագիրը[2], նվիրված է հայ նշանավոր բժիշկ, «Բժշկարան համառոտի» Հեղինակ, մոսկվաբնակ Պետրոս Քալանթարյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող երկու հարցի պարզաբանմանը, որի վրա և անհրաժեշտ ենք համարում կանգ առնել։

Այսպես, անդրադառնալով այն հարցին, թե որտեղ է իր բարձրագույն մասնագիտական կրթությունը ստացել Պ. Քալանթարյանը, Ա. Արշարունին գրում է. «...Եվ ահա մեծանուն ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանն իր բազմահատոր աշխատության երրորդ հատորում հայտնում է մի անորոշ միաք. Բժիշկ Պետրոս պ. Քալանթարյանը իր մասնագիտական կրթությունը ստացել է Եվրոպայում։ Ահա մի հանելուկ։ Ակադեմիկոսը չի ասում, թե ինչի հիման վրա մեր մոսկվահայ անվանի բժշկին ուղարկում է Եվրոպա կրթություն ստանալու, երբ իրենց տանը համալսարան կար արդեն։ Ակադեմիկոսը ենթադրությո՞ւն է անում. թե ձեռքին փաստեր ունի։ Ես այդ չգիտեմ»[3]։ Այնուհետև, Ա. Արշարունին երկարատև պրպտումներից հետո, «Պետրոս Առաջինի թագավորության շրջանից սկսած երկու դարերի ընթացքում եվրոպական երկրներից Ռուսաստան եկած դիպլոմավոր բժիշկների ցանկում» չգտնելով Պ. Քալանթարյանի անունը[4], ինչպես նաև հենվելով այն փաստի վրա, որ նա տասնյակ տարիներ գործել է Մոսկվայում, որտեղ կար համալսարան իր բժշկական ֆակուլտետով[5], եզրակացնում է, որ անվանի բժիշկը սովորել է Մոսկվայի համալսարանում ու նրան «150 տարի հետո հանձնում Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետ ավարտածի վկայական»[6]։

Այս կապակցությամբ, նախ նշենք, որ ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանը բոլորովին էլ չի ժխտում Պ. Քալանթարյանի Մոսկվայի համալսարանում սովորելու հնարավորությունը։ Նա գրում է. «Չի բացառվում այն հնարավորությունը, որ նա բժշկական կրթություն է ստացել Ռուսաստանում, կարող է, նույնիսկ Մոսկվայի համալսարանում։ Ուղղակի ապացույցներ, որ նա եվրոպական կրթություն ստացած բժիշկ է եղել, ըստ էության մենք չունենք...»[7]։

Ամենակարևորը, սակայն, այն է, որ, ինչպես Ա. Արշարունին[8], այնպես էլ Լ. Հովհաննիսյանը[9], հպանցիկ նշում, բայց պատշաճ ուշադրություն չեն դարձնում «Բժշկարան համառոտի» հեղինակի հետևյալ տեղեկության վրա. «...զփորձիւ և կիրառութիւն գտեալսն իմ՝ ներ քսան և հինգ ամեայ աշխատանաց իմոց»[10]։ Նշանակում է իր աշխատությունը շարադրելիս Պ. Քալանթարյանը արդեն քսանհինգ տարվա փորձառու բժիշկ էր։ Իրոք, ինչպես հավաստում է Լ. Հովհաննիսյանը, «Բժշկարան համառոտում» նյութը մշակված է թեև համառոտ, բայց բավական հմտությամբ, նրանում արտացոլված է իր ժամանակի բժշկական գիտելիքների վիճակը՝ պրակտիկ բժշկության հիմնական հարցերում[11]։ Գիրքն ամբողջությամբ վկայում է Պ. Քալանթարյանի բավա-

---

1 Ա. Արշարունի, Ձեռագրերի աշխարհում, Երևան, 1975։

2 Նույն տեղում, էջ 19—31։

3 Նույն տեղում, էջ 25։

4 Նույն տեղում, էջ 26—27։

5 Նույն տեղում, էջ 27։

6 Նույն տեղում։

7 Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. 3, Ереван, 1940, стр. 192.

8 Ա. Արշարունի, Նշվ. աշխ., էջ 24։

9 Л. А. Оганесян, Նշվ. աշխ., էջ 193։

10 Պ. Քալանթարյան, Բժշկարան համառոտ, Նախիջևան, 1793, էջ 5։

11 Л. А. Оганесян, Նշվ. աշխ., էջ 193։

կան կրթված լինելու մասին, որը հմտորեն կարողացել է համադրել, կապակցել եվրոպական բժշկությունը հին արաբականի հետ[12]։ Հայտնի է նաև, որ իր աշխատությունը նա շարադրել է հրատարակվելուց չորս տարի առաջ՝ 1789 թ.[13]։ Հետևաբար, Պ. Քալանթարյանը բարձրագույն մասնագիտական կրթությունը ստացել է ոչ ուշ, քան մինչև 1764 թ.։

Նկատի ունենալով այն հայտնի փաստը, որ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը Յոթնամյա պատերազմի (1756—1763 թթ.) և պրոֆեսորների բացակայության պատճառով սկսեց գործել համալսարանի հիմնադրումից (1755 թ.) ինը տարի հետո միայն, այն է 1764 թ.[14], կարելի է հաստատապես ասել, որ շուղայեցի բժիշկ Պետրոս Քալանթարյանը իր բարձրագույն բժշկական կրթությունը, ճամբենյան դեպս, Մոսկվայի համալսարանում չի ստացել։

Մյուս հարցը, որին անդրադարձել է Ա. Արշարունին այն է, թե որքան է ապրել և երբ է մահացել Պ. Քալանթարյանը։ Տարբերություն գրական աղբյուրներում կատարած որոնումներից հետո Ա. Արշարունուն հաջողվել է ավագ բահանա Հակոբ Սուրենյանցի՝ Մոսկվայի հայկական եկեղեցու անցյալին վերաբերող աշխատության մեջ այդ եկեղեցու 1802 թ. երեսփոխանական խորհրդի անդամների շարքում գտնել բժիշկ Պ. Քալանթարյանի անունը[15] և ըստ այդմ, եզրակացնել, որ նա «ապրել ու վախճանվել է Մոսկվայում, 1802 թվականից ուշ»[16]։

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ պրոֆ. Ա. Կծոյանը, դեռևս 1952 թ., անդրադառնալով Մոսկվայի համալսարանի սան, Հայաստանում առաջին դիպլոմավոր բժիշկ Սիմոն Գրիգորի Լոռու-Մելիքյանի կողմից հորը ուղղված նամակներին (պահվում են Մատենադարանում), պարզել էր, որ բժիշկ Պ. Քալանթարյանը «համաձայն բժ. Ս. Լոռու-Մելիքյանի վկայության, իր՝ Մոսկվայում սովորելու տարիներին աշխատել է Լազարյան ճեմարանում, հավանաբար ճեմարանին կից հիվանդանոցում»[17]։ Նկատի առնելով, որ Լոռու-Մելիքյանը Մոսկվայի համալսարանում սովորել է 1824—1832 թթ.[18], կարող ենք հավաստել, որ Պետրոս Քալանթարյանը կենդանի է եղել առնվազն մինչև 1824 թ. և, չնայած պատկառելի տարիքին (89 տարեկան), շարունակել է իր օգտաշատ գործունեությունը։

ԺՈՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

---

12 Նույն տեղում, էջ 198։

13 Պ. Քալանթարյան, նշվ. աշխ., տիտղոսաթերթը։

14 «Большая Медицинская Энциклопедия», т. 17, М., 1960, стлб. 817.

15 Ա. Արշարունի, նշվ. աշխ., էջ 30։

16 Նույն տեղում, էջ 31։

17 Ա. Կծոյան, 19-րդ դարի առաջին կեսի ռուսական բժշկագիտության առաջին հայ սանները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 7, էջ 116)։

18 Նույն տեղում, էջ 109, 110։